ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 5682

« 17 » հուլիսի 2025թ.

«ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Տ. ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՆ
(հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Աստղաձոր, Ազատամարտիկների 6/3)

«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան Գայի պողոտա 31/34)

«ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՆԱՋԱՐՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան Խաղաղ Դոնի փող. 27շ. 46բն)

Հարգելի՛ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի, փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

«ՍՈՐԵԼԼԻ» ՍՊԸ՝

- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չեն 1-ին, 4-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը,
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ՝

- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև

eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չէ 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը,

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես.

• դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը և կազմակերպաիրավական տեսակը (նշված է մասնակցի հայերեն անվանումը և կազմակերպաիրավական տեսակը),

• դիմում-հայտարարության «ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը» դաշտում նշված չէ ղեկավարի պաշտոնը,

• դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը հաստատվում են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

«ԱՆՏԻԳԱ» ՍՊԸ՝

- ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ Հավելված N 1.3-ը, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չէ 6-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը,

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի **հուլիսի 18-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788